Սիմէոն դպիր Լեհացի երբ Կ. Պոլիս կը հասնի, կը ծանօթանայ ինչպէս Մովսէսի նոյնպէս Ազարիայի, որուն խնդրանքով կ՚օրինակէ 1609 Օգոստոս 28ին Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և Կանոնագիրքը (ՀԱ. 1932, էջ 451), որուն յիշատակարանին մէջ Սիմէոն դպիր զայն կը կոչէ «աշակերտն ե՛ւ քաջ ե՛ւ արի, հմուտ եւ ճարտար իմաստակն» (Նոյն)։

Սիմէոն դպիր Լեհացի ինքն անոր հետ միասին շրջած է 1609 աշունէն 1611 գարուն, մէկուկէս տարի Պրուսա, Մանիսա, Իզմիր, Կէլիպօլու, Ռոտոսթօ, Նիկիա, և Նիկոմիդիա։

Դարանաղցի (էջ 411) կը պատմէ թէ անիկա Կիւտլէի կողմերը վանքի մը հաստատութեան ձեռնարկ ըրած՝ սակայն ձախողած է։ Նոյնպէս կ՚ըսէ թէ «գազանացեալ Գրիգոր Կեսարացին հանգստութիւն չետուր նմա՝ վարպետ անուն ասկին, որ երկոտասան ամ զաշխարհ կողոպտելով տալով իւրն, մինչ ի հինգ հազար ղուրուշն եւ այլ յաւելի, չկարացի յագեցուցանել զանյագ բնութիւն նորա։ Եւ առնոյր զժողովեալ ինչս նորա եւ ոչ կամէր տալ զաւագան, զի մինչ իւր ծառայեսցէ, ինչս ժողովեսցէ եւ բերցէ առ ինքն, որ քան զՅուդային եւ զՍիմոնին առաւել ունի զախտ արծաթսիթեան, զոր մի՛ լիցի աշակերտելոցն Քրիստոսի